

**ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԲԱԿԻ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արմենուհի ՉԻՖԼԻԿՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ասպիրանտ

Բանալի բառեր. համբավ, իրավաբանական անձի դադարում, ակտիվ

Ինչպես ցույց տվեց մարդկային հասարակության զարգացումը, միայն պատիվը և արժանապատվությունը բավարար չեն անձի մասին հասարակական ամբողջական գնահատական ձևավորելու համար: Ասվածը հատկապես արդիական է ներկայիս հասարակության պայմաններում, երբ տեղի է ունենում քաղաքացիական շրջանառության մասնակիցների գործանական և այլ հատկանիշների անընդհատ գնահատում, և որտեղ գործարար համբավը ստացել է առանձնակի նշանակություն: Տվյալ հոդվածում ցանկանում ենք ուսումնասիրել դրական գործարար համբավը, քանի որ հենց վերջինս է հանդիսանում քաղաքացիաիրավական պաշտպանության առարկա:

Թեև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրք) 162-րդ հոդվածի 1-ին մասում գործարար համբավը նախատեսվել է պատվից և բարի անունից հետո, բայց տարբերվում է նշված իրավական բարիքներից իր իրավական բնույթով: Եթե պատիվը «դասական» ոչ նյութական բարիք է, որն ուղղակիորեն կապված է բարոյական նորմերի հետ, ապա նույնը չի կարելի ասել գործարար համբավի մասին: Գործարար համբավը, ի տարբերություն այլ ոչ նյութական բարիքների, չունի վերջիններիս բնորոշ որոշ հատկանիշներ: Այսպես, այն կազմակերպությունների համար ոչ միայն և ոչ այնքան ոչ նյութական բարիք է, որքան ակտիվ՝ հանդիսանալով նրանց գույքային դրության բաղկացուցիչ մասը: Որպես ասվածի հիմնավորում կարող է հանդիսանալ ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. ապրիլի 17-ի թիվ 353-Ն հրամանը, որի համաձայն գուղվիլն ընդգրկված է ոչ նյութական ակտիվների շարքը: Բացի այդ, ոչ նյութական բարիքներին հատուկ է նաև դրանց կրողից անօտարելիությունն ու անփոխանցելիությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 969-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության պայմանագիրը նախատեսում է իրավատիրոջ բացառիկ իրավունքների, գործարար համբավի և առևտրային փորձի համալիրի որոշակի ժամալի օգտագործում: Հեղինակների մի մասի կարծիքով վերոնշյալ դրույթից բխում է, որ գործարար համբավը կարող է պայմանագրի հիման վրա փոխանցվել մեկ

անձից մեկ այլ անձի¹: Հեղինակների մեկ այլ խումբ այլ կերպ է մեկնաբանում՝ հիշյալ դրույթի վերոնշյալ կարգավորումը՝ նշելով, որ համալիր ձեռնարկատիրական գործունեության պայմանագրում գործարար համբավի դերն այդքան էլ ակնհայտ չէ, քանի որ անհատականացման միջոցների նկատմամբ իրավունքները փոխանցելիս փոխանցողի գործարար համբավը մեխանիկորեն տարածվում է այդ իրավունքները ստացողի վրա՝ առանց որևէ արտաքին կարգավորիչների:² Այսինքն՝ ֆրանչայզինգի պայմանագիրը ենթադրում է ոչ թե գործարար համբավի փոխանցման, այլ գործարար համբավի օգտագործման հնարավորություն³: Մեկ այլ օրինակ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1027-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն մասնակցի ավանդ է համարվում այն ամենը, ինչ նա ներդնում է ընդհանուր գործում՝ ներառյալ դրամը, այլ գույքը, մասնագիտական և այլ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև գործարար համբավը և գործարար կապերը: Մասնակիցների ավանդների դրամական գնահատումը կատարվում է նրանց համաձայնությամբ: Փաստորեն գործարար համբավը հանդիսանում է ավանդ և ենթակա է դրամական գնահատման:

Ինչ վերաբերում է գործարար համբավի օտարելիությանը, ապա կարծիք է արտահայտվել, որ, որպես կանոն, նման օտարում տեղի է ունենում կազմակերպության՝ որպես ամբողջական համալիրի օտարման հետ միաժամանակ: Այսպիսով, գործարար համբավը կապակցված ակտիվ է, որը կարող է փոխանցվել միայն այլ ակտիվների հետ համակցության մեջ⁴: Ուստի կարծում ենք, որ եթե վերը թվարկված դեպքերը մեկնաբանենք որպես գործարար համբավի փոխանցում, ապա գործարար համբավի փոխանցում պետք է համարել նաև այն դեպքերը, երբ իրավաբանական անձը միանում կամ միաձուլվում է մեկ այլ իրավաբանական անձի կամ երբ տեղի է ունենում իրավաբանական անձի կազմակերպափրավական ձևի փոփոխություն: Եթե վերջին, ինչպես նաև վերոգրյալ իրավիճակները համարենք գործարար համբավի փոխանցում, ապա պետք է ընդունենք, որ այն պարագայում, երբ բարձր հեղինակություն ունեցող քաղաքացին գործընկերային կամ անձնական հարաբերությունների մեջ է մտնում այլ սուբյեկտների հետ, իրենց միջև ձևավորվող հարաբերություններին փոխանցում է իր հեղինակությունը, պատիվը: Մենք գտնում ենք, որ թվարկված բոլոր իրավիճակներում գործարար համբավի

¹ Романец Ю., Система договоров в гражданском праве России, Юрист, М., 2001, էջ 362

² Брагинский М. И., Витрянский В.В., Договорное право. Книга третья. Договоры о выполнении работ и оказании услуг, Статут, М., 2011թ., էջ 1010:

³ Лысенко Е.С., Определение франчайзинга, как экономического отношения/Пробелы в российском законодательстве N4, Издательский дом Юр-ВАК, 2009թ., էջ 357:

⁴ Джабаева А.С., Деловая репутация юридического лица как нематериальный актив: Некоторые вопросы гражданско-правового режима/ Юрист. N3. Юрист, М., 2006 թ., էջ 43:

փոխանցում տեղի չի ունենում, այլ տեղի է ունենում գործարար համբավի կամ հեղինակության ազդեցության տարածում կոնկրետ հարաբերությունների վրա, որի շրջանակներում մեկ սուբյեկտը իրավասու է դառնում օգտվելու մեկ այլ սուբյեկտի գործարար համբավից:

Գործարար համբավն ունի ոչ գույքային բնույթ, սակայն տնտեսական արժեք ունենալու շնորհիվ այն ձեռք է բերում որոշակի առումով գույքային բնույթ: Այս կապակցությամբ իր դիրքորոշումն է արտահայտել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Այսպես, «Վան Մառլեն ընդդեմ Նիդերլանդների» վերաբերյալ գործով, հիշյալ դատարանը մատնանշեց, որ բարի անունը որոշակի հանգամանքների առկայության դեպքում կարող է դիտարկվել որպես գույք «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի իմաստով: Դատարանն իր դիրքորոշումը հիմնավորեց այն հանգամանքով, որ իրենց աշխատանքի շնորհիվ դիմումատուների կողմից ստեղծված հաճախորդների շրջանակը մասնավոր իրավունքի տեսանկյունից հանդիսանում է որոշակի արժեք և հետևաբար՝ նաև գույք:⁵

Ա. Վլասովը գտնում է, որ համատեղ գործունեության պայմանագրով ընդհանուր գործում ներդրվող գործարար համբավը՝ որպես ավանդ, հավասարեցված է գույքին և հանդես է գալիս որպես պայմանագրային պարտավորության առարկա:⁶ Այնուամենայնիվ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը գործարար համբավը դասում է ոչ նյութական բարիքների շարքը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն ոչ նյութական բարիքները քաղաքացիական իրավունքի օբյեկտներ են և չեն ընդգրկվում «գույք» հասկացության մեջ: Բացի այդ, ճանաչելով գործարար համբավը գույք, կառաջանան մի շարք խնդիրներ՝ կապված այդ գույքի օտարման, վարձակալության հանձնելու հետ և այլն: Ըստ Ա. Ջաբաևայի չնայած այն բանին, որ կազմակերպության գործարար համբավն ունի գույքային բնույթ՝ դասվելով բաժնետոմսերի արժեքի վրա իրական ազդեցություն ունեցող գործոնների թվին, այնուամենայնիվ, միայն գործարար համբավը՝ առանց այլ ակտիվների համակցության, այլ անձի փոխանցել հնարավոր չէ:⁷

Ըստ Ս. Սոշնիկովայի գործարար համբավի նկատմամբ իրավունքը հանդիսանում է գույքային հարաբերությունների հետ կապված ոչ գույքային իրավունք: Համաձայն հեղինակի կարծիքի զանգվածային լրատվամիջոցով ի-

⁵ Տե՛ս «Վան Մառլեն ընդդեմ Նիդերլանդների» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 1986 թվականի հունիսի 26-ին կայացված վճռը:

⁶ Տե՛ս Власов А.А. , Проблемы судебной защиты чести, достоинства и деловой репутации, М., 2000 թ., էջ 23:

⁷ Տե՛ս Джабаева А.С., նշված աշխատությունը, նույն տեղում:

րավաբական անձի գործարար համբավի ունահարման դեպքում գործարար համբավի իրավունքի ոչ գույքային կողմը կարող է արտահայտվել իրավաբանական անձին արատավորող տեղեկությունների հերքում հրապարակելով, իսկ գույքային կողմը՝ իրավախախտման հետևանքով առաջացած գույքային վնասի փոխհատուցում պահանջելով:⁸ Կարծում ենք, որ ելնելով սովյալ դիրքորոշումից, ստացվում է, որ պատվի և արժանապատվության իրավունքներն էլ ունեն գույքային բնույթ, քանի որ դրանց խախտման դեպքում էլ անձն իրավունք ունի պահանջել գույքային վնասի փոխհատուցում: Ուստի համաձայնելով, որ գործարար համբավն ունի գույքային բնույթ՝ միաժամանակ գտնում ենք, որ դրա գույքային բնույթը ոչ թե գույքային վնասի փոխհատուցում պահանջելու, այլ դրա՝ գործարքների առարկա լինելու հետևանք է, որը կարող է ունենալ ինքնուրույն արժեք:

Կազմակերպությունների գործարար համբավի առանձնահատկությունը պայմանավորված է նրանց՝ արհեստական կազմավորում հանդիսանալու հանգամանքով: Ինչպես նշել է Ռ. Սալեյը՝ մարդկային հասարակությունը անհատների ամորֆ համակցություն չէ. այն կարող է գոյություն ունենալ նաև մարդկանց միությունների պայմաններում, որոնց շահերը չեն համընկնում դրանց մասնակիցների շահերի հետ⁹: Հետևաբար իրավաբանական անձը, հանդիսանալով իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, ունի սեսփական, միայն իրեն ներհատուկ գործարար համբավ, որը չի հանդիսանում այն կազմավորող անձանց համբավի մեխանիկական հանրագումարը:

Իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է այն տեսակետը, որ գործարար համբավը հատուկ է միայն գործարարությամբ զբաղվող անձանց¹⁰: Իսկ ըստ Կ. Յարոշենկոյի գործարար համբավ կարող է ունենալ ցանկացած քաղաքացի, անհատ ձեռներեց, առևտրային, ոչ առևտրային կազմակերպություն¹¹: Ըստ Վ. Պլոտնիկովի՝ գործարար համբավ կարող են ունենալ քաղաքացիական իրավունքի ոչ բոլոր սուբյեկտները, այլ միայն նրանք, որոնք իրականացնում են սոցիալապես նշանակալի գործունեություն, և այդ առումով գործարար համբավ չեն կարող ունենալ այլևս չաշխատող թոշակառուները, ֆիզիկական հնարավորությունների բացակայության պատճառով որևէ աշխատանք կատարելու անընդունակ հաշմանդամ-

⁸ Տե՛ս Сошникова М.П., Гражданско-правовые и экономические аспекты деловой репутации, <https://www.lawmix.ru/bux/54632>

⁹ Տե՛ս Сергеев А., Толстой Ю., Гражданское право, Том 1, Проспект, М., 2005թ., էջ 148:

¹⁰ Տե՛ս Луспеник Д., Судопроизводство по делам о защите чести, достоинства и деловой репутации (опровержение недостоверной информации), Харьков, 2005թ., էջեր 19-20:

¹¹ Տե՛ս Значение понятия деловой репутации для подведомственности дел по ее защите, Потапенко С. В., <http://pro-sud-123.ru/science/publications/znachenie-ponyatiya-delovoy-reputatsii-dlya-podvedomstvennosti-del-po-ee-zashchite/>

ները և այլն¹²: Փորձենք չհամաձայնել այս տեսակետին՝ չաշխատող թոշակառուների մասով: Մեր կարծիքով նույնիսկ եթե անձը ժամանակի տվյալ պահին հանդիսանում է այլևս չաշխատող թոշակառու, դա ենթադրում է, որ նա ժամանակի այլ պահի զբաղվել է որոշակի աշխատանքով և դրան համապատասխան ձևավորել իր գործարար համբավը: Ուստի պնդումն այն մասին, որ անձը չունի գործարար համբավ միայն այն պատճառով, որ այլևս չի աշխատում՝ կենսաթոշակային տարիքի հասնելու պատճառով, գտնում ենք ոչ այդքան արդարացված: Այլ կերպ ասած՝ գործարար համբավը չի կարող ծերանալ մարդու հետ միասին, և պետք է ենթակա լինի պաշտպանության անկախ տվյալ մարդու տարիքից: Նույն տրամաբանությամբ անձի գործարար համբավը պետք է պաշտպանության ենթակա լինի նաև այն դեպքում, երբ նա հետագայում դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ: Ավելին, գտնում ենք, որ անձի գործարար համբավը պետք է ենթակա լինի պաշտպանության նաև նրա մահից հետո: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն քաղաքացու պատվի և արժանապատվության պաշտպանությունը շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո: Ստացվում է, որ քաղաքացու գործարար համբավի պաշտպանություն ՀՀ օրենսդիրը շահագրգիռ անձանց քաղաքացու մահից հետո չի ընձեռում: Այսպիսով, շահագրգիռ անձանց պահանջով պետք է թույլատրելի լինի անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը ոչ միայն քաղաքացու մահից, այլև սահմանված կարգով նրան՝ մահացած ճանաչելու (հայտարարելու) դեպքում, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն դատարանով քաղաքացուն մահացած ճանաչելն առաջացնում է նույն իրավական հետևանքները, ինչը՝ քաղաքացու մահը:

Բացի այդ գտնում ենք, որ առկա է օրենսդրական բաց իրավաբանական անձանց դադարումից հետո դրանց գործարար համբավի պաշտպանության կապակցությամբ: Մեր կարծիքով իրավաբանական անձի դադարումից հետո նրա գործարար համբավի պաշտպանությունը կարող է կարևոր նշանակություն ունենալ շահագրգիռ անձանց համար: Սակայն հարկ ենք համարում տարբերակում կատարել իրավաբանական անձի դադարման եղանակների միջև: Մասնավորապես, եթե իրավաբանական անձը դադարում է լուծարմամբ, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: Ուստի այս պարագայում չկան իրավա-

¹² Տե՛ս Плотников В., Деловая репутация как объект гражданско-правовой защиты, *Хозяйство и право*, 1995թ., <https://www.lawmix.ru/comm/8688>:

հաջորդներ, ովքեր շահագրգռված կլինեն պաշտպանելու դադարած իրավաբանական անձի գործարար համբավը: Մինչդեռ այլ է իրավիճակն այն դեպքում, երբ իրավաբանական անձը դադարում է վերակազմակերպման (վերակառուցման) արդյունքում, քանի որ վերջին դեպքում նրա իրավունքները և պարտականությունները փոխանցվում են այլ իրավաբանական անձի: Յետևաբար նշված դեպքերում դադարած իրավաբանական անձի իրավահաջորդների համար կարող է անտարբեր չլինել նրանց իրավանախորդի գործարար համբավն անաղարտ վիճակում պահելը:

Այդ իսկ պատճառով նպատակահարմար ենք համարում, որպեսզի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորումն ընդգրկի ինչպես քաղաքացու մահից հետո նրա գործարար համբավի պաշտպանության հնարավորություն, այնպես էլ իրավաբանական անձի՝ իր իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձի անցնելու եղանակով դադարելու դեպքում՝ նաև նրա գործարար համբավի պաշտպանության հնարավորություն:

Բացի այդ կարծում ենք, որ պաշտպանության ենթակա է ոչ միայն իր գործունեությունը դադարեցրած անձի գործարար համբավը, այլև այն անձի համբավը, ում վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն, որ նա ապագայում կարող է ունենալ գործարար համբավ, այլ կերպ ասած՝ որոշ դեպքերում անհրաժեշտ է պաշտպանություն նախատեսել նաև գործարար համբավ ունենալու պոտենցիալ ունեցող սուբյեկտների համար: Գտնում ենք, որ դա չափազանց կարևոր է ապագայում նրանց գործունեությունը պատշաճ գնահատվելու տեսանկյունից:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները՝

1/ Գործարար համբավի տակ պետք է հասկանալ ոչ միայն ձեռնարկատիրական հեղինակությունը, այլև ցանկացած դրական համբավ, որը կրում է անձը գործունեության որոշակի բնագավառում:

2/ Անհրաժեշտ է լրացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այն բացը, համաձայն որի շահագրգիռ անձինք հնարավորություն կստանան պաշտպանել անձի գործարար համբավը նրա մահից հետո:

3/ Օրենսդրական բաց է նաև իրավաբանական անձանց՝ իրենց իրավանախորդի գործարար համբավը պաշտպանելու հնարավորություն նախատեսված չլինելը, որը ևս անհրաժեշտ է լրացնել:

Արմենուհի ՉԻՖԼԻԿՅԱՆ

Գործարար համբավի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտի առանձնահատկությունները

Բանալի բառեր. համբավ, իրավաբանական անձի դադարում, քաղաքացու մահ, ակտիվ

Սույն հոդվածի շրջանակներում իրականացվել է գործարար համբավի հետ կապված իրավահարաբերությունների ուսումնասիրություն, որի արդյունքում առաջարկվել է լրացնել ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը անձի մահից հետո իր գործարար համբավը շահագրգիռ անձանց կողմից, իսկ իրավաբանական անձի՝ իրավահաջորդությամբ դադարելու դեպքում՝ վերջինիս գործարար համբավը իր իրավահաջորդների կողմից պաշտպանելու իրավունք ընձեռող դրույթներով:

Арменуи ЧИФЛИКЯН

Особенности деловой репутации как гражданско-правового объекта

Ключевые слова: репутация, прекращение юридического лица, смерть гражданина, актив

В рамках данной статьи было проведено исследование правоотношений, связанных с деловой репутацией, в результате чего мы предлагаем дополнить гражданский кодекс Республики Армения положениями, предоставляющими право защищать деловую репутацию гражданина заинтересованными лицами после его смерти, а деловую репутацию прекращенного юридического лица - его правопреемниками.

Armenuhi CHIFLIKYAN

Subtleties of business reputation as a civil-law object

Key words: reputation, termination of a legal entity, citizen's death, assets

This work presents a study of legal relations that are concerned with business reputation. As a consequence of this study it is proposed to amend the civil code of the Republic of Armenia with the provisions, which would provide the right for protecting business reputation of a citizen after his death by the persons concerned, and of a terminated legal entities - by their assignees.